



Տագնապի Ու Սպասումի Օրեր

«Գրական Թերթ»ի Արցախի թղթակից Թաթուլ Սաֆարեանի ստորագրութիւնը կրող յետագայ տողերը կը պարզեն ողբերգական մէկ պատկերը պաշարման վիճակի մէջ ապրող արցախցիներուն:

(ՌԵՊՈՐՏԱԺ ԼՂԻՄ-ԻԾ)

Յուլիսի 25ի ժամը 22-ն էր, Ստեփանակերտից հենց այնպէս, «իմչկայ-չկայ»ի համար զանգեցի Բերդաձորի Ծաղկաձոր գիւղ, եւ ուժասպառուած մի ձայն, որ գիւղխորհրդի Գործկոմի նախագահինն էր, յայտնեց.

- Լաւ է՝ զանգեցիք, հենց հիմա, այս պահին գիւղի վրայ կրակում են...

Մի քանի րոպէից հաւաքուեցին տեղի հայազգի ղեկավարները, որոնց պահանջով էլ զինուորականների մի փոքրիկ շարասին շարժուեց դէպի 39 քիլոմէթրի վրայ գտնուող դէպքի վայրը՝ Ծաղկաձոր:

Մինչ շարասիներ տեղ կը հասնէր՝ մէկը միւսին ձայն տալով հաւաքուեցին եւ մի երկու տասնեակ ստեփանակերտարնակ երիտասարդ բերդաձորցիներ եւ պահանջեցին, որ շտապ գիւղ գնալու համար իրենց մեքենայ յատկացնեն: Մեքենան պրորլեմ չէ: Բանն այն է, որ Բերդաձորը Յուլիսի 10ից չըջափակման մէջ է եւ առանց ակտիւմատակիր-

թիւն չէ, բոլորովին վերջերս Հին Շէնի վրայ էին յարձակուել, եւ բանն աւարտուել էր միակողմանի հեռուոր կրակոցներով ու «երեւ օրից գիւղն ազատէ» լկտի պահանջով: Առանց պետհամարանիշի մեքենաները Ծաղկաձորով անցնելիս ահաբեկում են բնակչութեանը՝ «Գիւղն ազատէ, այլապէս ձեզ կը կոտորենք» սպառնալիքներով: Պատմեցին նաեւ լաչինցիների կողմից Մեծ Շէնի Թելմանի անուան կոլտնտեսութեան խոշոր եղջերաւոր անասունների զանգուածային գողութեան փորձի մասին, որը գիւղացիների շնորհիւ կանխուել է: Կոլտնտեսականները երկու ամիս է փող չեն ստանում, որովհետեւ Շուշին չի տալիս: Խաթարուած է բենզինի, սննդամթերքի մատակարարումը: Գիւղերի խանութներում ծխախոտ անգամ չկայ, թէյ ու շաքար չկայ, իսկ եթէ կայ էլ, նշանակում է՝ Գորիսի չըջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Արմենակի Ալեքսանեանն է ուղարկել ուղղաթիւով: Ալեքսանեանը յաճախակի է հարցնում ինչի՞ կարիք ունէք, եւ բեր-

ես եկայ այն համոզման, որ Շուշի չըջանում պարետային ժամը, որպէս այդպիսին, ատրպէյճանցիների համար գոյութիւն չունի: Գիւղերուայ ժամը երկուսին Լիսազորից ԳԱԶ-52 թէ՞ 53 մականիշի մի ջրկիր մեքենայ անարգել անցնելով Ծաղկաձորի զինուորական պահակակէտը, սպառնալիքներ ու հայհոյանքներ թափելով քնած ծաղկաձորցիների հասցէին, շարժուեց դէպի Մեծ Շէնի ու Եխձահողի արանքում՝ Լաչին-Շուշի ճանապարհի վրայ անօրէն կառուցուած տաղաւարը, որի մօտ նրան միացան Լաչինի պահակակէտով անցած «ժիգուլի» մականիշի երկու մեքենաներ եւ մինչեւ ժամը չորսը կրակեցին Մեծ Շէնի ուղղութեամբ: Ողջ գիւղը ոտքի էր ու դիրք բռնած լսում էր տարեցների զրոյց-պատմութիւններն այն մասին, թէ ինչպէս 18 թուականին թուրքերը, հեռուից կրակել, ահաբեկել, իսկ իրենք էլ եկել, գիւղերը թալանել ու վառել են...

- Դրանց իմացածն էր ա, կարծում են՝ դեռ առաջուանն ենք, - հեզնում է մի ծերունի:

- Էլ առաջուանը չենք, քայց թէ անտէր ենք, Է, որսորդական հրացանները հաւաքելն էլ որ չլինէր,

դժուար թէ մեր գիւղերի տեղն իմացող լինէր աշխարհում. - շարունակում է մէկ ուրիշը:

- Անտէրութիւն չէ սա, - խօսքը խլում է մի երիտասարդ, - սա ֆիկցիաներից (առասպել - կեղծիք) ազատուող հայի վիճակ է:

Առաւօտեան, երբ Ծաղկաձորի զինուորական պահակակէտում հրամանատարին բողոքում էին, նա ասաց՝ ոչ մէկ մեքենայ ենք բաց թողել ժամը 1ից յետոյ, ոչ էլ կրակոցներ լսել... Որպէս միսիթարութիւն, հրամանատարն այդ փաստն էլ արձանագրեց:

Յուլիսի 30ի գիշերը Հին Շէնի Մէյդան կոչուող հանդամասից լըսուեց մի քանի կրակոց, գուցէ ատրպէյճանցիները պարզապէս որսորդական հրացաններով նապաստակ էին խփում... Բայց հանդամասն այնքան հեռու է գիւղից, որ զինուորները ուզենալու դէպքում էլ կրակոցները չէին կարող լսել:

Թէ ինչպէս անցաւ Արդ գիշերը՝ չգիտեմ: Բանն այն է, որ 31ին, ժամը ուղիղ 22ին զինուորների ուղեկցութեամբ Ծաղկաձոր ժամանեց Գորիսի շարասիներ, որը շինտեխնիկա էր տեղափոխում Ստեփանակերտ: Մեքենաները՝ ջարդուած, վարորդներն ու երեք շարքային զինուորներ՝ արիւնլուայ: Նրանց քարկոծել էին Լաչինում: Ծանր հիւանդներին Ծաղկաձորում առաջին օգնութիւնը ցոյց տալուց յետոյ շարասիներ շարժուեց դէպի Ստեփանակերտ: Եւ քանի որ ես զրահամեքենայի խցիկում էի՝ ծանր վիրաւորուած Հրաչիկ

(Շար.ը տեսնել 12րդ էջ)



ՏԱԳՆԱՊԻ ԵՒ ՍՊԱՍՈՒՄԻ ՕՐԵՐ

(Շար. 4րդ էջէն)

Ջհանգիրեանի կողքին (Մաղկաձորում նրան փոխարինեց մէկ ուրիշ վարորդ), շատ բան չէի տեսնում: Հրաչիկ տղան մի կերպ պատմում էր, թէ ինչպէս Լաչինի պարետի եւ միլիպետի տեղակալը ներկայութեամբ չորս յարբած բաքուցիներ խուզարկում էին մեքենաները, ինչպէս, են՝ հենց նրանք ոչինչ չգտնելով, նոճակի չորս ելեկտրոդետոնատորներ շարտել բռնատարի թափքը, այնու-

հետեւ, իբրեւ թէ գտել ու ազատ են կազմել, որը այդպէս էլ վարորդը չստորագրեց: Մօտ մէկ քիլոմէթր Լաչինի միջով ձգուող ճանապարհի երկու կողմերում էր, կանայք շանչ (ձեռքի թաթը եւ մատները լայն բացած, Խ.) էին անում...

Լիսագոր հասանք 0,50ին, հաւանաբար Լաչինից յայտնել էին Լիսագոր, այլապէս այդ ուշ ժամին այդքան մարդ չէր հաւաքուի: Զրահա-

մեքենայի փոքրիկ լուսամուտից իմ տեսածը քարերի ու բենզինաշէերի կարկուտն էր, եւ, որպէս պատասխան, աւտոմատակիր սպայի լուսինը թիրախ դարձրած կրակահերթը, դրան յաջորդեց ուսական «հայհոյանքաշարը», որի թիրախն արդէն քարկոծող վանդալներն էին: Լիսագորից մինչեւ Զայրըսուլու շարասիւնի առջեւից գնացող զրահամեքենան ստիպուած եղաւ երեք անգամ հսկայ քարակոյտերից մաքրել ճանապարհը: Ե՞րբ էին հասցրել, չէ՞ որ մէկ ժամ առաջ նոյն ճանապարհով Շուշիից շարասիւնին մօտով սեւ գոյնի «Վոլգա» մեքենայով Լաչին սլացաւ

Շուշիի միլիպետ (ոստիկանապետ) Թաղիւլը: Ե՞րբ հասցրին...

Շարասիւնին վրայ քարերի կարկուտ տեղաց նաեւ Շուշիի հեռուտաաշտարակի մօտից: Այդպիսով, եօթ ժամումն յաղթահարելով 39 քմ. ճանապարհը, շարասիւնը առաւօտեան ժամը 5ին հասաւ Ստեփանակերտ, ուր պարետի փոխարէն մեզ դիմաւորեց շտապ օգնութեան մեքենան եւ 13 վիրաւորների տեղափոխեց մարզային հիւանդանոց...

ԹԱԹՈՒԼ ՍԱՖԱՐԵԱՆ

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»

4 Օգոստոս, 1989